ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Սիրակ Հովակիմյանը, Արամ Հովսեփյանը, Անահիտ Ղազարյանը, Գարեգին Մարգարյանը, Ժորա Մարտիրոսյանը, Արամ Մկրտչյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադեվոսյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 13-ի՝ հերթական թիվ 10 նիստի հետևյալ օրակարգը

1. «Գառնիի արվեստի, մշակույթի եվ սպորտի կենտրոն» ռումնական հաստատություն համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունն անվանափոխելու ե սին

Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 06 դեկտեմբերի 2022թվականի 162-Ա որոշման մեջ փոս
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու նստաշրջանի հերթական նիստի գումարմա

4. Համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման վերաբերյալ

5. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
6. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
7. Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ
սկանություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձեվով օտարելու մ

ության Կոտայքի մարզի Գառնի համայնք իավագանու 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 186-Ն որոշման մեջ փոր

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

«ԳԱՌՆԻԻ ԱՐՎԵՍՏԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԿԵՆՏՐՈՆ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքայինբաժանմանմասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվիրավականակտերիմասին» օրենքի 33-րդև 34-րդհոդվածների համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1.«Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոն» արտադպրոցական կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Գառնի համայնքի «Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոն» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել Գառնի համայնքի «Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոն» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ***համայնքի ավագանին որոշում է***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 06 դեկտեմբերի 2022 թվականի <<Գառնիի արվեստի, մշակույթի և սպերտի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2022 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի>> N 77-Ա որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝***համայնքի ավագանին որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամսահ մանել 2023 թվականի հոկտեմբերի 26-ը՝ժամը 17:30:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի ***ավագանին որոշում է՝***

1. Գառնի համայնքի սեփականություն համարվող հողերը օտարել հրապարակային նսակարկումների միջոցով սահմանելով մեկնարկային գին համայնքի կարիքների համար համաձայն հավելվածի:
2. Աճուրդը տեղի կունենա 2023թվականին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Հայկազ Սահակյանի դիմումը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացիներ Հայկազ Գագիկի Սահակյանին և Մարինե Վազգենի Մարուքյանին հա մասեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղի 07-021-0311-0184 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 0.1 հա մակերեսով հնդավոր հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի կա տեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշան ակության՝ ձկնաբուծական արհեստական լճակ կառուցման նպատակով:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փո փոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդ գրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-
րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Մխիթարյանի դիմումը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի Գայանե Մխիթարյան Կոնստանտինի սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղի 07-021-0233-0044 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 0.0403 հա մակերեսով հնդավոր հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ ձկնաբուծական արհեստական լճակ կառուցման նպատակով:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան,
ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ինմասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականիմայիսի 18-ի N 912 որոշմամբ հաստատված կարգի 33 կետի <<զ>> ենթակետով, 33.1 կետի <<բ>> ենթակետով
33.2կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարիառաջարկը ևկառույցներնիրականացրած անձի դիմումը ***ավագանին որոշում է՝***

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գառնի գյուղի 5-րդ թաղամաս 4-րդ փողոց թիվ 34/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն համարվող 07-021-0004-0048 ծածկագրով օրինականացված ինքնակամ կառույցն ու համապատասխան հողամասը նախապ ատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի կարգով վաճառել տվյալ կառույցն իրականացնո ղ ***Բարսեղ Գևորգյանին***.
2. Ուղղակի վաճառքի գին սահմանել Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանված կարգով. (հող 0.00587 հա արժեքը 170000 ՀՀ դրամ, շենք.շինության 21.25 քմ արժեքը 106700 ՀՀ դրամ)
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով ***Զարինե Գաբրիելյանի*** դիմում խնդրանքը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Զարինե Գրիշայի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող 07-021-0400-

0002 կադաստրային ծածկագիր 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական վարելահող հողամաս ին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ ատնտեսական վարելահող 07-021-0400-0014 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.0055 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ հողամասի ընդլայնման նպատակով:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, ***համայնքի ավագանին որոշում է***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 186-Ն որոշման (այսուհետ՝որոշում) մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի.

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԻԿ ԱԼՈՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ